

**Մարզպետարան դիմած քաղաքացիների դիմումների,  
բողոքների 2020թ.-ի ինն ամիսների ամփոփագիր**

2020թ-ի ինն ամիսների ընթացքում ստացվել է **585** դիմում:

**ա/** Դրամական օգնություն է խնդրել **377** քաղաքացի: 333 քաղաքացու խնդրանք բավարարվել է, 44-ինը՝ մերժվել, 2020թ-ին արդեն իսկ օգնություն ստացած լինելու պատճառով:

**բ/** Բնակարանային և քաղաքաշինական հարցերով դիմել է **66** քաղաքացի, որից 39-ի խնդրանքը բավարարվել է, 27-ինը՝ մերժվել, /Բնակարանային պահանջի դիմումները մերժվել են մարզպետարանի իրավասությունից դուրս լինելու պատճառով/:

**գ12** /Առողջապահական հարցերով դիմած քաղաքացիները մերժվել են պետ. պատվերի և առողջարանային ուղեգրերի սահմանափակ լինելու պատճառով:

**դ/** Աշխատանքի հարցերով դիմած **12** քաղաքացիներից 6-ի պահանջին դրական ընթացք է տրվել, 6 դիմում մերժվել է, /դիմումները մերժվել են աշխատատեղ չլինելու պատճառով/:

**ե/** Գյուղատնտեսական հարցերով դիմել են **20** քաղաքացի բոլորի խնդրանքն էլ բավարարվել է:

**զ/** Կրթության և մանկական հիմնարկներին առնչվող հարցերով դիմել է **23** քաղաքացի և բոլորն էլ ստացել են դրական պատասխան:

**է/** հողաշինության հարցերով դիմած **20** քաղաքացիներից, 16 դիմումի տրվել է դրական պատասխան, 4 դիմում ընթացքի մեջ է:

**ը/** Որդեգրման, մանկատնից երեխային վերադարձնելու և ներառական կրթության վկայագիր տրամադրելու հարցերով դիմել է **34** քաղաքացի և ստացել դրական պատասխան:

**թ/** Այլ բնույթի **33** դիմում է ստացվել:

**ժ/** Սեփականաշնորհման բնույթի դիմումներ ներկայացրած քաղաքացիներին առաջարկվել է դիմել դատարան:

Փ. Ղազարյան

մարզպետարանի

քարտուղարության ընդհանուր բաժնի պետ